ՇԱԲԱԹ 15 ՕԳՈՍՏՈՍԻ 1881—№ 161

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարները խմբագրատանը 5 կոպ.

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Բաժանորդագրվողները դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 161—ՇԱԲԱԹ 15 ՕԳՈՍՏՈՍԻ 1881

Խմբագրութեան ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին հեղինակի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ [illegible]։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1\frac{1}{2}$ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի պավիլիոնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.—Թղթակցութիւն Ախալքալաքից։
Քաղաքական.—Հայկական խնդիր.—Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիրը.
Մանր լուրեր.
Յայտարարութիւններ.
Բանասիրական.—Իմ կինս.

ԱԶԳԱՅԻՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Ախալքալաքը ուրիշ քաղաքների, օրինակ Տփխիսի, հակապատկեր է ներկայացնում։ Ուրիշ քաղաքներում ամեն բան ամառը դադարում է, օրինակ՝ Թատրոն, ցիրկ, ժողովներ, դասախօսութիւններ, իսկ Ախալքալաքում այս բոլորը լինում են միայն ամառը։ Ամառը վերադառնում են ուսանողները Տփխիսից և իրանց փոքրիկ ներկայացումներով մի քիչ զուարճացնում են ախալքալաքեցիներին։ Անցեալ յուլիսի 11-ին ախալքալաքցի գիմնազիստները Սահփաննոս քահանայ Գէմիրջօղլեանցի աշխատութեամբ ներկայացրեցին յօգուտ տեղական ընթերցարանին «Աշնանային երեկոյ», «Ես էլ քի մօգիքօւլութիւն» և մի փոքրիկ Մօլիերի հեղինակութիւններից։ Ներկայացման արդիւնքը եղաւ 122 ռ. 70 կ., իսկ ծախքը 38 ռ. 92 կ., ապառիկ 13 ռ. 5 կ., իսկ զուտ գումարից մօտ 60 ռուբլին վճռուեցաւ իսկոյն ուղարկել Տփխիս կենդրոնական գրավաճառանոցը հայերէն նոր գրքեր բերելու։ Այդ գումարը յանձնուեցաւ Սահփաննոս քահանայ Գէմիրջօղլեանցին, որ ուղարկէ։ Միւս մնացած գումարը պէտք է յանձնէ ընթերցարանին։ Այս ընթերցարանը ոչ թէ միայն գրքերի է կարօտ, այլ և մի ապահով սենեակի։ Անցեալ օր քիչ մնաց թէ սենեակը քանդուէր կարդացողների գլխին։ Դրանից սարսափեցան ուսումնարանի մի սենեակը ընթերցարան դարձնել․ բայց այդ նոր սենեակը աւելի վտանգաւոր է, քան թէ առաջինը։ Ես խորհուրդ կը տայի այս մասին ուշադրութիւն դարձնել։

Ձեր լրագրին յայտնի է, որ Տփխիսի ռէալական ուսումնարանի աշակերտները Վ. Պճճիկեան, կարապետ Պապինեան, Խ. Չըլինկարեան (ախալքալաքեցիներ), Միրզոյեան և Կամսարական հիմնեցին մի գրադարան, որի գրքերը այժմ ռէալական ուսումնարանի հայոց լեզուի ուսուցիչ պ. Կուսիկեանի մօտ են։ (Մօտ 150 ռ. փող և երեք հարիւր գրքեր)։ Հիմա լսում ենք, որ այդ գրքերը և փողը պէտք է յանձնեն մի մասնաւոր անձի մինչև որ միջոց լինի բանալու։ Բայց շատերը կարծում են, որ կը գոյանի այդպիսի միջոցով։ Ուստի աւելի լաւ կը լինի այդ գրքերը յանձնուի այժմ հաստատուած «Հայկական բարեգործական» ընկերութեանը, որը գուցէ օգնէ շուտով բացուելու Տփխիսում միակ հայերէն ընթերցարան և ազատել այդ քանի աշակերտների արիւն քրտինքով հաւաքուած գրքերը և փողերը։

Յայտնի դերասան պ. Ադամեանը գալու է Ախալքալաք մի քանի ներկայացումներ տալու։ Շնորհաւորում ենք Ախալքալաքին․ գուցէ տաղանդաւոր դերասանը իր ներկայացումներով կը փոխէ ախալքալաքեցիների միատեսակ կեանքը։

Օկրուժնօյ սուդի անդամները ահա երկու շաբաթ է այստեղ են։ Մօտ հարիւր գործ կայ վճռելու, որոնցից ամենից աւելի ուշադրութեան արժանի է Մատոյեանցի առասպելական պահանջը սուլդացիներից 43,000 ռուբլին։ Յայտնի է, որ բոլոր երեք գիւղերը տրուած էին տարեկան 10 հազար ռուբլիով․ իսկ պ. Մատոյեանցը միայն սուլդացիներից պահանջում է խոտի փող 43,000 ռուբլի։ Երևելի խղճմտանք։

Մի յայտնի աւազակ, որը գուցէ հինգ տարուայ մէջ մի 50 գործերում մեղադրուած է, անցեալ օրը ազատուեցաւ մի թեթև պատժով։ Այս աւազակը ամբողջ ախալքալաքեցիների հանգստութիւնը խանգարում է, բայց էլի անպատիժ մնաց։

Այստեղ զանազան բաներ են պատմում։ Օրինակ՝ մի օրիորդի բաժանորդ են գրում առանց նրան ասելու, իսկ երբ օրիորդի ծնողները տեսնում են, որ «Մշակ» է գալիս իրանց աղջկայ անունով, զարմանում են և բարկանում են [illegible] աղջկանը, մինչև որ բանը պարզվում է։ Պէտք է գովել այդպիսի մշակականների վարմունքը։ Այսուամենայնիւ, այդպիսի միջոցներով նրանք մօտ 15 բաժանորդներ են որսացել։ Կարծում ենք, որ խմբագրութիւնը դժուարանայ գոհ մնալ այդպիսի ծառայութիւնից։

Այս տարուայ հնձի մասին ամեն կողմից առատութեան ձայներ են լսվում։ Ամենից առատ գարի ու խոտ կայ։ Ախալքալաքեցիները յոյս ունին, որ գարու սոմարը մի 7 ռուբլի լինի, իսկ ցորեանի 12 ռ., արդէն քաղել սկսել են, ես անձամբ մի քանի գիւղեր ման եկայ և աչքերովս տեսայ մեր գիւղացու միակ հարստութիւնը և յոյսը։

Երկար անձրևներից յետոյ օրերը կանգնեցան։ Ախալքալաքեցիները խումբ խումբ յաճախում են դէպի «լագոնները» զօրախաղին մտիկ տալու։

Կ. Ն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Անգլիական արտաքին գործերի պաշտօնէութիւնը յուլիսի վերջին հրատարակեց իր կապոյտ գիրքը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ԿԻՆՍ

ՔԱՂՈՒԱԾՔ ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ *).

Վերջապէս հասաւ ինձ համար ցանկալի օրը և ես հայր եղայ մի փոքրիկ չքնաղ արարածի, որին յետոյ Լուսիկ անունը տուի։

Սաբէթի կաթը շատ առատ էր և մանուկը շատ լաւ կ'զգար իրեն, եթէ Սաբէթը կարողանար շարունակ նրա մօտը լինել առանց հեռանալու․ բայց որովհետև զուարճութիւնները խլում էին մանուկից նրա մօրը, այդ պատճառաւ ես ստիպուած էի համաձայնվել, որ մի գեղջկուհի վրացի կին ստնտու լինի Լուսիկին․ Բայց այդ կնոջ կաթը վատ ազդեցութիւն էր անում Լուսիկի վրայ․ Վերջապէս եկաւ իմ հայրենիքիցս մի մանկամարդ հայ գեղջկուհի իր ամուսնու հետ (վերջինիս համար լաւ պաշտօն էի ճարել), որոնց ուղարկել էր իմ մայրս իմ խնդիրքիս համաձայն։ Նամակի մէջ մայրս հաւատացնում էր ինձ, որ այդ ստնտուն աղջկամայր լինելուց ի զատ առաջի ծնունդի է, որպիսի ստնտու և հարկաւոր է քո Լուսիկի համար։ Եւ արդարև, Լուսիկի վրայ շուտով նկատելի եղաւ այդ հոգով և մարմնով առողջ ստնտուի կաթի կենարար ազդեցութիւնը։

Ես երդուել էի չը հաւատալ Սաբէթին Լուսիկի կրթութիւնը, ես երդուել էի իմ անմիջական հսկողութեան տակ կրթել զարգացնել իմ մանուկս, ես գիտէի որ Սաբէթը նրա վրայ լաւ ազդեցութիւն չէ կարող ունենալ, նամանաւանդ որ տեսնում էի—թէ ինչպէս գրօսանքից, խանութներ պտտելուց, լօտօից և երեկոյթներից մնացած ազատ ժամերը զանազան օտար լեզուներով մանկական թոթովի նմանցնելով խօսում էր Լուսիկի հետ, չը նայած իմ անդադար դիտողութեանց, թէպէտ Լուսիկը դրանից ոչինչ չէր հասկանում, սակայն դա յառաջաբանն էր և ես հաւատացած էի, որ եթէ այդպէս շարունակվելու լինի, մի գեղեցիկ օր Լուսիկը վերջապէս պիտի սովորէ և թոթովէ այդ ինձ համար ատելի թոթովը իմ մանուկիս բերանում . . . «Ո՛հ, ինչպէս ես գոհ կը լինէի, եթէ կարողանայի մի առժամանակ մի որևէ հնարքով հեռացնել Սաբէթին մօր դեր կատարելուց»—մտածում էի ես։

Սաբէթը, երկու տարուայ մեր ամուսնական կեանքի ընթացքում, վիրաւորել էր իմ բոլոր նուիրական զգացմունքները, իմ տունս լօտօ խաղի տուն էր դարձրել, խոհեմ և ազնիւ կնոջ և ոչ մի պարտաւորութիւնը չէր կատարել, աչքերը զոցած աջ ու ձախ ցրուել էր իմ փողերս, սիրոյ խօսքերին մտիկ չէր արել և փոխանակ իւր կարծրացեալ սրտին մէջ ազնիւ ձգտումների և զգացումների համար էլ մի անկիւն բանալ աշխատելու, ամօթ, մի օր էլ մի մեծ քսութիւն էր արել իմ դէմ իւր մօրը, որից մեծապատիւ զոքանչս էլ չը կարողանալով իւր զայրոյթը զսպել, այն զզուելի տեսարանն էր սարքել ինձ համար . . .

Իմ կեանքս այդպէս թունաւորելուց յետոյ, կարծում էք թէ ես պիտի կարողանայի անտարբեր աչօք նայել թէ ինչպէս նա այժմ էլ իմ մանուկիս է ուզում մի Սաբէթ ստեղծել և հետևաբար մանուկը խլել, խորթացնել իւր հօրից, ինձանից . . . Լինել դժբաղդ միանգամայն ինչպէս ամուսին և ինչպէս ծնող, ոչ, դա անկարելի է։ Լուսիկը պիտի լինէր իմ մխիթարութիւնս, իմ սփոփանքըս, Լուսիկը պիտի զարգանար հայ հոգով, Լուսիկը պիտի ունենար ազնիւ ձգտումներ, որոց և ոչ մինը կարող էր մատակարարել նրա մայրը, Սաբէթը։ Ես Լուսիկիս գեղեցիկ արձան, քար, վէմ, ապառաժ ստեղծելու դիտաւորութիւն չ'ունէի, ուրեմն և Սաբէթի մայրական ծառայութիւններին պէտք չ'ունէի. ես իմ գլուխս պիտի տայի մինչև անգամ հասարակաց կարծեաց առաջ խայտառակվելու գնով . . .

Այդ պատճառաւ որոնում էի մի հնարք ինչպէս և լինի Սաբէթին հեռացնելու։ Ես քաջութիւն չ'ունէի Սաբէթին ուղղակի արտաքսել, բաժանուել նրանից և չէի կարծում թէ երբեիցէ այդպիսի քաջութիւն կ'ստանամ, բայց մի շատ նպատակայարմար միջոց ներկայանալով քաջալերեց ինձ հաստատ մնալ իմ կամքիս և շտապել շուտով նրանից օգուտ քաղել։

Ամառն էր։ Սաբէթը անտանելի շոգերից գանգատվում էր և ցանկութիւն էր յայտնում ամարանոց գնալ, աւելացնելով որ Թիֆլիսի օդերը Լուսիկի համար էլ վնասակար էին։

Ես պատասխանեցի նրան, որ այդ բոլորը ճշմարիտ է, սակայն իմ գործերս թոյլ չեն տալիս ինձ Թիֆլիսից հեռանալ և ես առանց Լուսիկի չեմ կարող ապրել . . .

—Ուրեմն ամբողջ երեք ամիս այս օդերում պիտի խեղդուինք։

—Ինչու, հակառակը. դու կարող ես գնալ. քո մօրդ հետ կարող ես գնալ։

—Բայց Լուսիկը . . .

—Լուսիկը ստնտուին հետ իմ մօտս կը մնայ։

Սաբէթը ըստ երևութին դժկամակում էր, թէպէտ իւր սրտի խորքի մէջ, հաւատացած եմ, մի կողմով էլ ուրախ էր, որ ամարանոցի մէջ ազատ կը լինի մի մանուկի ձանձրացնող ներկայութիւնից։ Նա ուզում էր համոզել ինձ, որ Լուսիկին հետը տանէ և ես շաբաթ մի անգամ կ'երթամ կը տեսնեմ, բայց վերջերը տեսնելով որ ես անդրդուելի եմ՝ համաձայնեցաւ իւր մօրը հետ գնալ և Լուսիկը պիտի մնար իմ մօտս։

Ես առաջարկեցի Սաբէթին Բօրժոմ գնալ, բայց նա ուզեց անպատճառ Մանգլիս գնալ, պայմանաւորելով իւր ցանկութիւնը նրանով որ իւր շատ բարեկամուհիքը այնտեղ պիտի լինին, որոնց և հաստատ խօսք է տուել նրանց մօտ գնալ։

---

*) Տես «Մեղու» №№ 158, 159 և 160.

(այսպէս է կոչվում այն գիրքը, որը բովանդակում է իւր մէջ Անգլիայի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ գործերը) Փոքր-Ասիայի և Սիրիայի ազգաբնակութեան դրութեան մասին։

Այդ գիրքը բաղկացած է 323 երեսից, պարունակում է իւր մէջ 172 հեռագիրներ։ Այդ գիրքը մի մեծ և մինչև մանրամասնութեան հասցրած գանգատ է Դրան վատ կառավարութեան դէմ Սիրիայում և մանաւանդ Հայաստանում։ Անգլիան և Եւրօպան այդ գրքով նախապատրաստվում են Անգլիայի արտաքին քաղաքականութեան նոր մասի համար. այդ նոր մասը կոչվում է իրագործել Բէռլինի պայմանագրով որոշուած վերանորոգութիւնները Հայաստանում բոլոր մեծ պետութիւնների աջակցութեամբ։ «Köln. Zeitung» գերմանական տիեզերահռչակ թերթը ասում է. «թէ ինչ հետեւանք կ'ունենայ այդ քաղաքականութիւնը, այդ մեզ ցոյց են տուել Բուլղարիայում անցքերը. — Հայաստանի կատարեալ ինքնավարութիւն (autonomie), և նրանք, որոնք մօտիկ են կանգնած Գլադստոնին, բոլորովին սպասում են, որ քաղաքականութիւնը այս ուղղութիւնը կ'ստանայ։ Այդ կապոյտ գիրքը ունի բաւականին գրագրութիւններ, որոնք պէտք է ապացուցեն, որ կառավարող ժողովրդներից ամենաբիւնարբուն թիւրքերն են և հայերը ստրուկ ցեղերից ամենաշնորհալիներն են, որ յեղափոխութիւնը պիտի ծագի, որ Եւրօպայի միջամտութիւնը անհրաժեշտ հարկաւոր է, կատարեալ այնպէս, ինչպէս 1876-ին։ Գօշէնը իւր տխրօշ մաքին համաձայն եռանդով աշխատեց և Հայերի հալածանքները պատմելու ժամանակ, որքան կարելի է խիստ գոյներ տուաւ»։

«Köln. Zeitung» լրագիրը, որ առաւելեան մանր ազգերի վերայ սովորաբար ուշադրութիւն չէ դարձնում, և միշտ պաշտպան է հանդիսացել Թիւրք իշխանութեան հաստատ մնալուն արեւելքում, բնականապէս այդ պատուելի թերթին դուր չէ գալիս Գլադստոնի քաղաքականութիւնը արեւելքի վերաբերմամբ։

Այդ կապոյտ գրքի մէջ կայ Գօշէնի մի հեռագիրը անցեալ տարուայ Նոյեմբերի 4-ից. «Չի կարելի ուրանալ, ասում է Գօշէնը, որ հայերը դժուար թէ դեռ աւելի դիմանալ կարողանան, որ վատ կառավարութիւնը, որի տակը նրանք ճնշուած են, վաղ թէ ուշ կ'ստիպէ նրանց, եթէ տէրութիւններից յուսահատուին, ապստամբելու կամ դրա համար պատրաստութիւններ տեսնելու. դրա հետեւանքները կը լինեն սարսափելի տեսարաններ քիւրդերի և հայերի մէջ, մի կրկնութիւն այն չարագործութիւնների, որոնք տեղի ունեցան Բուլղարիայում և ուրիշ տեղերում։ Վերջումը Գօշէնը առաջարկում է, որ անգլիական կառավարութիւնը աշխատէ, որ այն տէրութիւնները, որոնք Բէռլինի պայմանագիրը ստորագրել են, միասին և ուժեղ միջոցներով այդ խնդիրը լուծելու միջամտեն։ Այս մասին «Köln. Zeit.» կարծես թէ ցաւոտ սրտով ասում է. «Միմիայն արեւելեան գործերին անտեղեակ նոր մարդ կամ իւր գործը հասկացող յուզիչ անձը կարող է այդպիսի հեռագիր գրել։ Նա, ով որ մի փոքր ծանօթ է Թիւրքիայի հետ, գիտէ, որ Հայաստանից եկած գանգատները այնպիսի կանոնաւորութեամբ կրկնվում են, ինչպէս տարուայ եղանակը, որ այն երկրի դրութիւնը հիմա առաջուանից վատ չէ, որ հայերը հաստատ ամենայետինն են, որոնց մասին կարելի լինի ասել, թէ նրանք կարող են ապստամբել։ Կարծ, Հայաստանի դրութիւնը ծայրայեղ վարդագոյն չէ, բայց և այնպէս չէն համապատասխանում Գօշէնի նկարագրութեանը։ Միշտ, այն ժամանակից, որ Թիւրքիայում յուզմունքը նորաձեւութիւն է դարձել 1876-ից մինչև 1878-ը, հայերը աշխատել են բուլղարներին նմանուիլ և ներկայացնելու իրենց որքան կարելի է ամենաճնշուած ազգը Թիւրքիայում։

«Ի հարկէ հիմա նրանց յաջողուել է Գլադստոնի աջակցութիւնը ձեռք բերելու, և կասկած էլ չը կայ, որ Գլադստոնը, որի յատուկ եռանդը յայտնի է, երբ գործը վերաբերում է մի ճնշուած ազգին, հայոց վերանորոգութիւնը գլուխ կը բերէ»։

«Լորդ Դէօֆֆէրինը, կոչա. Գօշէնի կիրթ և քաղաքավարի յաջորդը նշանակուած է նրա համար, որ վերանորոգութեան խնդիրը առաջ տանէ։ Ամէն օր լսում ենք Պօլսից ստացած հեռագիրներով նրա ունեցած յաջողութիւնների մասին ընկերութիւնների մէջ և այն քայլերի մասին, որ նա արել է սուլթանի մօտ, որ այս վերջինի կուլ տալու դառն հաբը քաղցրացնէ։ Նա նրանով սկսեց, որ խորհուրդ տուեց սուլթանին սկսելու վերանորոգութեան գործը, որ նա դրանով տէրութիւնների միջամտութեան առաջն առնէ։ Ահա այսպիսի հայրական հոգացողութեամբ է վերաբերում Անգլիան հայերի գործին»։

Պէտք է մենք ասենք այստեղ, որ այս երևելի գերմանական թերթի մէջ հայերի մասին վերյիշեալ խօսքերը գրած են Անգլիայից։ Պէտք է գիտենալ, որ յօդերը աւելի լաւ տեղ են բռնում այս թերթումը, և թէ թիւրքիայի դեսպանը Լոնդօնում ազգով յոյն է—Մուսուրուս-փաշան։ Որովհետև այդ թերթի մէջ հայերի մասին այդ տողերը գրողը Լոնդօնից անպատճառ դեսպանագիտական դասին է պատկանում, կարելի է հաւասի լինել, որ Մուսուրուս-փաշան այդ գրութեանը մասնակից է։

Եթէ մէկ կողմից հայերը պէտք է ուրախանան, որ իրենց հակառակորդի բերանից լսում են, որ Անգլիան ջերմ պաշտպան է Հայաստանի ինքնավարութեան, միւս կողմից ցաւալի է, որ «Köln. Zeitung» լրագրի պէս մի երևելի հրատարակութիւն ոչ թէ միայն անտարբեր է դէպի հայերը, այլ և անտեղեակ հայերի վիճակին՝ աւելի թշնամական դիրք է բռնում դէպի հայերի գործը, Հայաստանի ինքնավարութիւնը։

Հայերի համար շատ վատ է, եթէ Եւրօպայում տիրէ այն համոզմունքը, թէ տաճկահայերը իրե՞նք ընդունակ չեն գէնք առնելու իրանց մարդկային իրաւունքը պաշտպանելու համար։

Մի քանի ժամանակ առաջ մամուլի մէջ խօսեցին, որ արևելագէտ Ֆրանսիացի Դիւլորիէն կամենում է մի թերթ հրատարակել հայոց խնդիրը պաշտպանելու համար։ Մենք այդ հրատարակութեան դէմ էինք զանազան պատճառներով, բայց որովհետև գործը, բանինքեան ազգի կենսական շահերի համար էր, ոչինչ այդ մասին չը խօսեցինք։ Հիմա գիտենք, որ Վիէննայում Ֆրանսերէն հրատարակվող մի թերթ կամենում է պաշտպանել հայոց գործը, հայոց շահերը։ Անտարակոյս՝ մի նոր թերթ հրատարակելով բացի իւր նորութեան դէմ կռվելու արգելքներից, նա և այն պակասութիւնն ունի, որ միմիայն հայերի համար լինելով՝ չի կարող այդ թերթը այնպիսի մի նշանակութիւն ստանալ, ինչպիսին վայելում են եւրօպական մեծ թերթերը։ Ուրիշ է և աւելի ձեռնտու, եթէ հայերի շահերը բռնեն պաշտպանել եւրօպական յայտնի թերթերը, ինչպէս վերը յիշած գերմանական «Köln. Zeit.» լրագիրը; Բաժանորդ գրուելով Վիէննայում հրատարակվող Ֆրանսիական թերթին բանը չի վերջանալ, այլ պէտք է մամուլի համար գումար կազմէն։ Պէտք է տարին մէկ հինգ կամ վեց հազար րուբլի ուղարկել Վիէննայի Ֆրանսիական թերթին իբրև օժանդակութիւն և աշխատել մի քանի յայտնի եւրօպական թերթերին լաւ գումարներ վճարելով գրաւել հայոց գործի օգտին։ Լոկ ցանկութիւններով, սպասելով ոչինչ չի դուրս գալ, ոչինչ չի առաջանալ։ Մենք արևելեան խնդրի, հայոց խնդրի ծագելու օրից միշտ ասել ենք, որ Անգլիայից պէտք է Թիւրքիայի հայերը սպասեն իրենց փրկութիւնը։ Թէպէտև կան մեզանում այնպիսիներ, որոնք Անգլիայից ոչինչ չը սպասելով կարծում են մինչև անգամ, որ Թիւրքիային այդ կողմից վտանգ չէ սպառնում, ուրեմն շատ էլ ուշադրութիւն չի դարձնիլ Դուռը Անգլիայի խօսքերի վերայ, բայց կ'ուզենայինք իմանալ, թէ քանի օր օսմանեան պետութիւնը գոյութիւն կ'ունենայ, եթէ Անգլիան չը լինի, թէպէտև հաստատ համոզուած ենք, որ առանց Անգլիայի հնացած կամ կորած Թիւրքիան ոչինչ շահ չի բերել հայոց գործին, բացի կատարեալ նրա անհետանալը։

Այն ժամանակները անցան, երբ Թիւրքիայի հայերը կարող էին գոհ լինել լոկ վարչական վերանորոգութիւններով, երբ Թիւրքիայում հայը իւր կեանքի, իւր կալուածքի ապահովութիւնն էր խնդրում, երբ Թիւրքիայի հայը դատաստանում իւր արդարութիւնն էր խնդրում—հիմա դրանով հայերին չի կարելի կշտացնել։ Ի՞նչ մեծ բան է, որ հայը իւր աշխատանքի, իւր կալուածքի տէր է ճանաչվում, ի՞նչ մեծ բան, որ հայի վկայութիւնը դատաստանում ընդունուի. . . . . հայը իբրև ազգ պահանջում է իր քաղաքական կեանքը, հայը պահանջում է Բէռլինի պայմանագրի 61-րդ յօդուածի իրագործումը։

Մենք գիտենք, որ Տաճկահայաստանի վերանորոգութեան գործումը ռուսաց դեսպանը պէտք է աջակցի անգլիական դեսպանատուի լորդ Դէօֆ.

Իւր կ'ուզէր, բայց գնար միմիայն։ Եւ այդպէս Սաքէթը մի գեղեցիկ առաւօտ ճանապարհուեցաւ դէպի Մանգլիս մի քանի անգամ Լուսիկին համբուրելուց յետոյ։ Մարիամին (սանուհի անունը) պատուիրեց, որ Լուսիկին լաւ պահէ ! . .

«Այդքանից միայն, Սաքէթ, միամիտ կին, շատ լաւ կը պահէ, դու գնա, դրանն և մի երեք չորս ամսից յետ կը վերադառնաս և քո Լուսիկին աւելի մեծացած, գեղեցկացած, հետաքրքրելի կը գտնես . . . Ամուսինդ չէ գալիս ամառանոց, որովհետև նրա գործերը չեն թողնել տալիս, մանուկդ չը կարողացար քեզ հետ առնել, որովհետև ամուսինդ առանց նրա ապրել չէ կարող. բայց միթէ դու կարող էիր Թիֆլիզի տօթերում քո ամուսնուդ և քո մանուկիդ պատճառաւ նրանց հետ յիմարաբար խեղդուել . . . Այդտեղ, Մանգլիսումը օդը աւելի մաքուր է, զով է, առողջարար է. վայելիր այդ բոլորը ամէն հանգստութեամբ՝ քո սիրելի ընկերուհիների շրջանում, կը վերադառնաս և դեռ ժամանակ շատ կ'ունենաս ուզած լիզովդ «մայրիկ» բառը սովորեցնելու մանուկիդ . . . այնպէս չէ . . .»

Վերջապէս յաջողեցաւ ինձ Սաքէթին հեռացնել և աւելի հեշտ կերպով, քանթէ ես երեւակայել էի։ Ամէն բանի թեթեւ վերաբերվող Սաքէթը և դէպի մօր պարտաւորութիւններն էլ թեթեւ վերաբերվեցաւ. այժմ մի մեղադրանք աւելի ունէի ես իմ ձեռքիս, որոնցմով պիտի ես նրան դատապարտէի . . .

Նրա՝ Լուսիկին տուած համբոյրը վերջինը եղաւ, որովհետև երբ ամառանոցից վերադառնալու ժամանակն հասաւ՝ ես նրան մի նամակ յղեցի, որի մէջ ամենախիստ կերպով քննադատելով մեր երկու տարուայ ամուսնական կեանքը, ապացոյցներով հաստատեցի, որ մենք բոլորովին միմեանց համար չենք ստեղծուած։ Նամակիս մէջ ես անխնայ կերպով հարուածում էի նրա անտարբերութիւնը դէպի ամուսնական պարտականութիւնները, դէպի մօր պարտականութիւնները և վճռողապէս յայտնում էի, որ մեր միասին ապրելը անհնարին է դարձել։ «Եթէ դեռ ես մնացել է քո մէջ մի սուրբ զգացմունք, երդուեցնում եմ քեզ նրանով չը խնագարել եմ հանգստութիւնս գոնէ մի առժամանակ»—գրեցի ես նրան։ Ես առաջարկում էի նրան պատուաւոր ամսական և խնդրում էի, որ ամառանոցից վերադառնալով գնայ անպատճառ իւր մօր հետ բնակի, եթէ միտք ունի երբեւիցէ ուղղվելու այնպէս ինչպէս ես ուզում եմ և ինչպէս իրեն յայտնի է և կրկին վերադառնալու իմ մօտ, երբ նա ինքնիրեն ուղղված կը գտնի իմ ցանկացածիս պէս, թող հաւատացած լինի, որ ես բաղկատարած կ'ընդունեմ ուղղված և անարատ Սաքէթին, իսկ եթէ ընդհակառակը նա աւելի ցած ընկնի, ես միայն կը ցաւեմ, որ այդ կինը իմ կինս էր և իմ մանկանս մայրն է։ «Այժմ և ոչ մի պայմանով չեմ ուզում պատահել քեզ, խօսել քեզ հետ, բացատրութիւններ տալ, բացատրութիւններ պահանջել. դրանց բոլորի համը մենք առել ենք, էլ բաւական է»—գրեցի ես։ «Ինչ կը վերաբերէ Լուսիկին՝ նա իմ մօտս և իմ հոգատարութեանս տակը կը մնայ և շատ բաղդաւոր կը լինի, եթէ ապառ կը մնայ քո պախարակելի ներգործութիւնից»։ Յ. Գ.-ի մէջ աւելացրել էի, որ նրա մնացած բոլոր հագուստները և իրեն պատկանած իրեղէնները ամառանոցից վերադառնալով իւր մօր տանը կը գտնէ։

Այս նամակիս պատասխանը ես չ'ստացայ և չէի էլ սպասում, որովհետև այնպէս խիստ և անողոք էր նրա եղանակը, որ էլ մի խօսք էլ ասելու տեղ չէր մնացել։

Սակայն լսեցի ես, որ Սաքէթը եկել է և իւր մօր հետն է բնակւում։ Չար լեզուները իրենց խօսակցութիւնների համար առատ նիւթ էին ճարել։ Բոլոր մեր թաղը, մինչև անգամ բոլոր քաղաքը այդ անօրինակ անցքի մասին խօսում էին։ տաքգլուխ չաղակրատութիւններ չ'ափելով։ Ես սպասում էի դրան, ես գիտէի, որ այդպէս պիտի լինի և վաղուց արդէն միտքս դրել էի ամէն խօսակցութիւնների ուշ չը դարձնել և այդ անհաճոյութիւնները համբերութեամբ տանել։ Իմ հայրենի քաղաքիցս էլ մի կողմից էին նեղացնում ինձ . . . Վերջապէս շատ խօսելով իրենք խօսողները ձանձրացան և մի ուրիշ պակաս տարօրինակ անցք, մի հրդեհ, մի սնանկութիւն իմ անցքիս տեղը բռնելով խօսակցութեան առարկայ դարձաւ և իմս մոռացվեցաւ, ինչպէս և մինչ պատահումէ։

—

Երկու տարի ահա անցել է, և ես Սաքէթին չեմ պատահել, չեմ տեսել, միայն գիտեմ որ շարունակում է իւր մօր հետ ապրել և շատ փակուած կեանք է վարում։ Նշանակած ամսականը իւրաքանչիւր ամիս ճշտութեամբ ուղարկել եմ, բայց ամբողջ առաջի տարին չէ ընդունել. ամսականը տարել են և յետ բերել։ իսկ Սաքէթի մայրը* սահմանաւոր կարողութեան տէր կին լինելով, ես չէի ուզում որ նա Սաքէթի համար աւելորդ ծախքերի մէջ ընկնէ, այդ պատճառով ես այն ամբողջ տարուայ գումարը առայ, մի ծրարի մէջ դրի ներփակելով հետեւեալ նամակը. «Եթէ Սաքէթը չի ընդունիլ և այս, ես կը համարեմ որ նա էլ ուղղվելու դիտաւորութիւն չ'ունի և շատ կը ցաւիմ», և ուղարկեցի։

Սաքէթը ուզում է եղել ըստ սովորութեան ծրարը առանց բանալու վերադարձնել. բայց երբ իմացաւ որ մէջը նամակ կայ, ուրախութեամբ յափշտակեց ձեռքից, շտապով բացաւ նամակը կարդաց, շրթունքներին սեղմեց և բարձրաձայն հեկեկալով ընկաւ թախտի վրայ և երեսը ծածկեց թիկնաբարձի մէջ. յետոյ ձեռքովը նշան տուաւ որ ես հեռանամ,—ասաց գրատարը,—տիկնոջ մայրը հեռուն նստած էր և նկատեց. «ախր ամէն օր լաց, լաց, թէ ինչ է»։ Տիկինը ոչինչ չը պատասխանեց։ Նա սև հագուստ ունէր հագած, նիհարացել էր և գոյնը քիչ թռած էր»,—աւելացրեց գրատարը։

Ես լուռ լսում էի Գրիգորի (գրատարի անունը) խօսքերը և մի անբացատրելի տխրութիւն ճնշում էր իմ սիրտս։ «Դա չէ նշանակում որ Սաքէթը զղջացել է . . . նամակը յափշտակեց և հե-

Փէրինին Պօլսում։ Մենք գիտենք, որ նոյն տեսակ հրահանգ է ստացել իտալական դեսպանը իւր կառավարութիւնից։ Տարակոյս չը կայ, որ միւս տէրութիւնների դեսպանները նոյնպէս կ՚օգնեն լորդ Դէօֆֆերինին։

Հայերի վերայ սրբազան պարտք է դրած — աշխատելու, որ ամէն տէրութիւնների հետ լաւ յարաբերութեան մէջ մնան։ Հայ գործողները հիմա ոյժերը միացած պէտք է ամէն միջոցներ գործ դնեն, որ մեծ պետութիւնների գործող պետական անձինքների սիրտը, համակրութիւնը գրաւեն Հայոց գործի համար։

Ամէն Հայ պէտք է աղօթէ Գլադստոնի առողջութեան և երկարակեցութեան համար, որի ազատամտութիւնը, ազնիւ, վեհ հոգին և բարի բնաւորութիւնը ամէն կասկածից բարձր է կանգնած։

Գլադստոնը պաշտօնէութեան մէջ չեղած ժամանակը, երբ նա անգլիական պարլամէնտում դիմադրութեան առաջնորդն էր, իւր եռանդոտ, համոզիչ, գեղեցիկ ճառերովը Եւրոպայի ուշադրութիւնը դարձրեց Բուլղարիայի վերայ, այդ ճնշուած և հալածուած ազգի վերայ, այնպէս որ կամաց առաջ գնացող լորդ Բիկոնսֆիլդը ստիպուած էր բուլղարական խնդիրը ընդունելու և նրա լուծմանը մասնակցելու։

Անտարակոյս՝ այս ազնիւ հոգին, որ միշտ ճնշուած ազգերի պաշտպան է հանդիսացել, հիմա անգլիական զօրաւոր կառավարութեան ղեկը իւր ձեռքին բռնելով չի գլանալ օգնելու ճնշուած Հայ ազգին, որը սրտի բաբախումով նայում է նրա վերայ և յոյսերով ապրում է։

Բայց յոյսերով ապրելը բաւական չէ, օտարի օգնութիւնը սպասելով անգործ մնալը այսպիսի դէպքերում՝ յանցանք է դէպի Հայրենիքը դէպի — Հայաստանի ինքնավարութիւնը։ Ս. Ս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Լօնդոնից մայրաքաղաքի լրագրներին հեռագրում են օգոստոսի 4-ից (16-ից), որ պատգամաւորների ժողովում սըր Չարլզ Դիլկը պատասխանելով ասաց. «Ցաւում եմ, որ մինչև այժմ ոչ մի քայլ առաջ չէ արուած Բէրլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածի համար։ Լորդ Դէօֆֆէրինը այս մասին առարկութիւններ արաւ սուլթանին և Թրքական առաջին պաշտօնեային. Նրանք երկուսն էլ ըստ երևութին գործերի դրութեան լուրջ բնաւորութիւնը խոստովանում են։ Լորդ Դէօֆֆէրինը լուրջ կերպով պընդում էր նրանց առաջ, որ նրանք, մինչև մշտական բարենորոգմանց ծրագիրը մշակվում է, անյապաղ միջոցներ ձեռնարկելին մեծ չարագործութեանց առաջն առնելու համար բաւական իրաւունքներով ընդունակ կառավարիչներ նշանակելով։ Մի քանի դեսպանների բացակայութիւնը Կ. Պօլսից, ռամազանի ժամանակ զբաղմունքների դադարեցնելը և կրկին ուրիշ պատճառներ խանգարում էին մինչև այժմ Հայաստանի բարենորոգմանց վերաբերութեամբ օտար պետութիւնների համաձայն գործողութեանց։ Լորդ Դէօֆֆէրինը կատարելապէս հասկանում է, թէ ինչ մեծ նշանակութիւն են տալի այս խնդրին բրիտանական կառավարութիւնը և ժողովուրդը. Նա յայտնեց, որ չի խնայիլ ոչ մի աշխատանք և ոչ մի դէպք աչքից չի թողնիլ այդ հարցի վճռման համար։

⁂

Ցունական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի պատգամաւորների ժողովը արձակել և նոր ընտրութիւններ կատարել։

⁂

Ֆրանսիան հրաժարվում է Սֆաքսի ռմբակոծելու ժամանակ վնասված իտալական հպատակներին վարձատրել։

⁂

Ցէտինէից զօրքեր են ուղարկում հէրցէգովինական սահմանի վերայ կարգը ապահովելու համար։

⁂

Օգոստոսի 4-ին (16-ին) Փարիզի Շարօնի թաղում 8½ ժամին ընտրողական ժողով եղաւ Գամբէտտայի ծրագիրը լսելու համար. Ներկայ էին 10,000 մարդիկ։ Ժողովի բացման ժամանակ աղմկալից ձայներ լսվեցան, այնպէս որ ժողով կազմել անհնարին եղաւ. այդ աղմկին օգնում էր և այն հանգամանքը, որ դահլիճի մի մասն էր միայն լուսաւորուած։ Գամբէտտան փորձում էր խօսել, բայց նրա ձայնը չէր լսվում. այն ժամանակ նա գաւազանով սեղանին զարկելով խաղաղութիւնը խանգարողներին դարձաւ այս խօսքերով. «Դուք 10,000 մարդ էք և դուք ենթարկվում էք և անզօր եղած մի բուռը կատաղած մարդկերանց, որոնց ես ճանաչում եմ. բայց դրանից այստեղ կան անպիտաններ, որոնք վարձուած են այն բանի համար, որ նրանք վիճաբանութիւնները խանգարեն, որովհետև նրանք պատասխանել չեն կարող։ Ես ձեզ սպասում եմ օգոստոսի 21-ին»։ Աղմուկը այնքան մեծ էր, որ միայն առջևում կանգնող մարդիկը միայն լսեցին։ Քանի րոպէ պատերազմից յետ Գամբէտտան ստիպված էր հեռանալ և նիստը փակվեցաւ. ժամը 9-ին։

⁂

Անգլիական լօրդերի ժողովը օգոստոսի 4-ի նստին մի փոքր վիճաբանութիւններից յետ ընդունեց իրլանդական հողային օրինագիծը այն ձևով, ինչ ձևով որ նախորդ օրը պատգամաւորների ժողովից դուրս եկաւ քննադատելուց յետոյ։ Մարքիզ Սալիսբէօրին յայտնեց, որ նա գոհ է օրինագծի մէջ արած փոփոխութիւններով, բայց պատասխանատուութիւնը այս օրինագծի համար պատգամաւորների ժողովի վերայ է թողնում։

⁂

Վերջին տեղեկութեանց նայելով Դրան և ֆրանսիական կառավարութեանց յարաբերութիւնը ամենաբարեկամական դիրք է առել։ Տրիպօլիս զօրք ուղարկելը դադրեցրած է և ամենակարճ ժամանակում ինչպէս երևում է Տրիպօլիի նահանգապետին պաշտօնից կը հեռացնեն և ուրիշին կը նշանակեն։

⁂

«Ռէյտէրի գործակալութեան» Կ. Պօլսից օգոստոսի 11-ից հեռագրում են, որ այն լուրը, իբր թէ «Իզզէդին» թիւրք նաւի հրամանատարը հրահանգ է ստացել Միդհատ-փաշային և Թագաւորական միւս յանցաւորներին կրկին յետ Կ. Պօլիս բերել, պաշտօնապէս հերքվում է։

⁂

Կ. Պօլսից հաղորդում են, որ ներկայ տարուայ համար թիւրք ելևմտքի նախահաշիւը երեք ամիս է արդէն կազմուած է և առաջարկուած սուլթանին հաստատութեան համար, բայց նա մինչև այժմ դեռ չէ հաստատել։ Ասում են, որ սուլթանը վախենում է, որ նախահաշիւ հրատարակելը շատ վատ տպաւորութիւն կը գործի հասարակութեան վերայ և սրա համար էլ ուշացնում է նրա հաստատութիւնը։

⁂

Չիկագօյի իրլանդական կօնգրէսի մի քանի անդամները դժգոհ լինելով լրագրների այն լուրերից, որ այդ ժողովի մասին հրատարակվեցան, մի քանի լրագրերում ծանուցումներ տպեցին, որ դինամիտի գործածութեան խնդիրը ամենևին չէ քննվել ժողովի մէջ, որը յատկապէս միայն զբաղուած էր յեղափոխական վարդապետութեան օրինաւոր միջոցներով։ Ոչ Օ՚Դօնովան Ռօսսան, ոչ Կրօուն մասնակից էին կօնգրէսին և իբրև նրա անդամների մէջ կատարեալ համաձայնութիւն էր տիրում։

⁂

Բէրլինի պաշտօնէութեան «Provinzial-Correspondenz» լրագիրը օգոստոսի 10-ի համարի մէջ ասում է, — աչքի առաջ ունենալով գերմանական պատգամաւորների ժողովի առաջիկայ ընտրութիւնները, թէ — ինչ բանի մէջ պիտի կայանայ Գերմանիայի ներքին քաղաքականութիւնը. գերմանական լրագրերը այս բացատրութեան մէջ իշխան Բիզմարկի ծրագրի պատկերն են տեսնում։ «Այն, ինչ որ հարկաւոր է Գերմանիային — ասում է կիսապաշտօնական լրագիրը — նրա ազգային վերածնութիւնից և ներքին հաստատութիւնից յետոյ — է առողջ տնտեսական հիմքերի վերայ զարգացումն, ազատ արտաքին որևէ ազդեցութիւնից, կայսրութեան եկամուտքի զօրեղութեան հաստատութիւնը հարկերի և տուրքերի աւելի կանոնաւոր բաժանման միջնորդութեամբ, ուղղակի հարկերի յարաբերական թեթևութիւնը, հասարակութեանց ուսումնարանների և եկեղեցիներին պահպանելու ծախսերի մեծ մասից ազատութիւնը, ազգային երկրագործութեան և արդիւնաբերութեան հովանաւորութիւնը, հոգաբարձութիւն մըշակների բարեկեցութեան վերայ գործնական քրիստոնէութեան ոգով — մի խօսքով, Թայլերը պէտք է տէրութեան հովանաւորութիւնը գտնեն, որը պէտք է հասկանայ իւր քրիստոնէական և բարոյական խնդիրը և ստոր դիտողի դերից հրաժարվի։ Այս ծրագիրը պէտք է վաղ թէ ուշ ճշմարիտ կերպով կատարվի. նա այժմ է և կը լինի միշտ գերմանական քաղաքականութեան նպատակը, և այս նպատակին կը հասնեն, — որան երաշխաւոր են գերմանական ազգի ճշմարիտ զգացմունքները»։

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ
13-ին օգոստոսի.

Արք. բանկ. 1-ին	96 50
— — 2-րդ	94 25
— — 3-րդ	94 75
— — 4-րդ	94 12
Վիճակահ. 1-ին	229 25
— — 2-րդ	226 25
Արև. փոխառ. 1-ին .	91 37
» » 2-րդ .	91 37
» » 3-րդ .	91 25
Լօնդօն	25 81
Համբուրգ	229 50
Փարիզ	271 50
Ոսկի	7ռ. 75 կ.

Բիրժայի վիճակը խաղաղ է։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են — Այստեղ հոգեհաց տալու սովորութիւնը շնորհիւ հայր Դաւիթ Եպրալեանցի վերջացաւ. և այդ չաալ ծախսից փոխարէն իւրաքանչիւր մեռելատէր իր կարևոր չափով ընծայելու է փող յօգուտ բարի նպատակների։

⁂

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են, որ Լազարեան ճեմարանի վարժապետ տեսուչ պ. Գէորգ Քանանեանցը յուլիս ամսի 23-ին Բարձրագոյն իշխանութիւնից նոյն ճեմարանի դիրեկտոր հաստատվեցաւ։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

կեկալով ընկաւ թախտի վրայ . . . բայց միթէ դա չէր կարող մի բաւականին ճիշտ հաշուած գործով չարժելու միջոց լինէր . . . Սաբէթը այդպէս չը վարվեցաւ դեռ մեր նշանված ժամանակը . . . բոլորը դժբաստահութիւն չէր . . .»։ Ես բիւր մաքեր յօգուտ և ի վնաս Սաբէթին կուտակվում էին իմ գլխիս մէջ, ծանրանում էին իմ հոգույս վրայ։ Ինչպէս դժբաղդ էի ես . . . և իմ միակ միխիթարութիւնս միակ ուրախութիւնս Լուսիկն էր։

Ես շարունակում էի իւրաքանչիւր ամիս ամսական ուղարկել Սաբէթին. նա ընդունում էր. էլ ոչ մի խօսք, ոչ մի չարք . . .

—

Այս քանի օրս փողի ծրարը տանելով՝ Գրիգորը վերադարձել է և մի տասներորդ անգամ խնդրել է Մարիամին Սաբէթի կողմից, որ մի օր ծածուկ, երբ ես տանը չեմ լինիլ, տանէ Լուսիկին և գնայ իրեն մօտ, շատ է ցանկանում տեսնել։ Այդ բանը ես նոր իմացայ, ինձանից թագցրել էին։ Մարիամը զօրովելով Սաբէթի անդադար աղաչանքներից, վերջապէս առանց ինձ հարցնելու և իմ թոյլտուութիւնս խնդրելու և առանց երկար մտածելու հագցրել է Լուսիկին նրա ամենալաւ հագուստիկները և տարել է Սաբէթի մօտ։ Սաբէթը իւր միմիայն հինգ ամսեկան տեսած Լուսիկին յանկարծ երկու տարեկան գեղափթիթ, անուշիկ, սիրուն մանուշակ է տեսել... Մարիամը չը կարողանալով պահել իւր գաղտնիքը՝ ինձ բոլորը պատմեց։ «Պարոն, չեմ կարող ասել թէ ինչ արաւ տիկինը, երբ տեսաւ ինձ Լուսիկը գրկիս դռնովը մտնելիս։ Նա թռաւ դէպի ինձ, խլեց Լուսիկին իմ ձեռքիցս և արտասուքով թրջեց նրա երեսը, գօգնոցը, բոլոր հագուստը, գրկեց, պինդ սրտին սեղմեց, համբուրեց բիւր անգամ նրա երեսը, աչկուները, ձեռքերը, շորերը... Լուսիկը աչքերը մեծ բացած, զարմացած նայում էր մօր երեսին. — «Հա՛, դու ինձ չես ճանաչում, հոգեակս, ինձ չես ճանաչում. ի հարկէ չես ճանաչիլ, ասում էր արտասուելով, իմ սէրս, իմ Լուսիկս, արի քեզ տանեմ իմ սենեակս, քո մայրիկի սենեակը», և տանելով այնտեղ չէր դադարում նրան համբուրելուց և քաղցր անուններ տալուց։ «Ինչպէս դու մեծացել ես, ինչպէս սիրունացել ես», և ուրախութիւնից ծիծաղում էր և լաց էր լինում»։

«Ես էլ չէի կարողանում արտասուքս բռնել... Յետոյ հարցրեց թէ ինչու Լուսիկի մազերը գեղեցիկ չեմ սանդրել, և հրամայեց որ սանդր տամ իրեն ինքը սանդրի. ես հնազանդուեցայ. Նա սկսեց մի ուրիշ կերպ սանդրել և երբ խօսակցութիւնից տեղեկացաւ, որ դուք էք սովրեցրել ինձ այդպէս սանդրելը, իսկոյն քակեց իւր սանդրածը և առաջի կարգովը սանդրեց։ Յետոյ ջուր ուզեց որ «իւր երեխի երեսը լուայ», լուացաւ երեսը, մազերը կրկին սանդրեց և տարաւ հայելու մօտ ցոյց տալու. «հիմա գեղեցիկ ես, հիմա սիրուն ես, հա՞»։ Եւ ճշմարիտ, պարոն, Լուսիկը վարդի պէս գեղեցկացել էր, աւելի գեղեցիկ քան թէ ամեն օր և հանգստութեամբ թոյլ էր տալիս ամեն ինչ անել իրեն հետ։ Յետոյ տիկինը յանկարծ տեսնելով որ Լուսիկի գօգնոցի կոճակը կտրվել է, առաւ ասեղ որ կարէ. ես խնդրեցի թոյլ տայ ես կարեմ. «Չէ, ասաց նա, թող երեխիս կոճակը ես կարեմ, ես»։ և ոչ Լուսիկին ձեռքիցը թողելով, ոչ կարը՝ մի րոպէում կարեց, բայց չը հագցրաւ։ «Դեռ ես իմ երեխիս լաւ չեմ տեսել, թողէք որ տեսնեմ» ասաց և Լուսիկին մերկացրեց, բոլորովին մերկացրեց, լացաւ և համբուրեց հազար անգամ. «Ի՞նչ սիրուն է, ինչ գեղեցիկ է իմ երեխաս»— շորերը կրկին հագցրեց գօգնոցից ի զատ և Լուսիկը գրկին՝ գնաց պահարանից մի հիանալի գօգնոց բերեց հագցրեց. և էլ ինչեր արաւ... ինչեր արաւ... ես վախենում էի թէ տիկինը ուրախութիւնից խենթացած չը լինի... Յետոյ ձեզանից հարցրեց և երբ ձեր մասին սկսայ խօսել և ասացի որ դուք սովորաբար տխուր էք, բայց երբ Լուսիկին հետ խաղում էք՝ ուրախանում էք, նա Լուսիկին պինդ իւր սրտին սեղմեց և նորից հեկեկաց. «Ես նրան ներում եմ... բոլորը ներում եմ...» — ասաց տիկինը արտասուելով։ Հազիւ հազ մի կերպ կարողացայ առնել Լուսիկին և շտապել տուն տիկնոջն արտասուքը աչքերին թողնելով։ Նոր գօգնոցի համար աղաչեց ինչպէս անեմ, որ չը տեսնէք դուք, թէ չէ կ՚իմանայ, ասում է, որ Լուսիկը իմ մօտ է եղել, կը բարկանայ։ Միմիայն շատ խնդրեց, որ միւս անգամ Լուսիկին նրա մօտ տանելուց էլ նոր գօգնոցովը տանեմ, որ «իւր երեխին վրայ իւր ձեռագործ, գոնէ, մի բան տեսնէ», այնուհետև երեխին էլի համբուրեց շատ, շատ և ես հեռացայ խոստանալով միւս շաբթին էլ Լուսիկին նրա մօտը տանել...»։

Ես արտասուքս չը կարողանալով բռնել, մտայ իմ սենեակս։ «Սաբէթ, կարծում ես ես քեզ եմ տանջում»...

Ես ուզեցի գօգնոցը տեսնել. Մարիամը բերեց. Նա շատ սիրուն և գեղեցիկ ճաշակով կտրուած էր և կուրծքի վրայ կէս շրջանակով երեք շարք հայերէն տառերով ասեղնագործուած էր. «Իմ անուշիկ Լուսիկիս, 187.. Ս.» այնպէս գեղեցիկ, որ թեթև հայեացքից կարելի էր կարծել, թէ դրանք մի հիանալի զարդագործներ էին . . .

—

Երջանկութեան մի նոր արշալոյս մօտ հորիզոնում բացվում է ինձ համար. հեռու չէ այն րոպէն, երբ ես պիտի գըտնեմ իմ կորուսեալ ոչխարս, իմ Սաբէթիս, որին այս վայրկեանին աւելի եմ սիրում քան երբէք։

Վերջացնում եմ խօսքս և այս րոպէիս իմ սիրուն հրեշտակը, իմ Լուսիկը ծընկներիս վրայ նստած և քաղցրիկ լեզուով «հայրիկ» «հայրիկ» թոթովելով՝ փոքրիկ ձեռքերով շոյում է իմ երեսս։ Լուսիկ, գիտես, որ աւելի քաղցր թոթովը, աւելի սուրբ թոթով «Մայրիկն» էլ պիտի շուտով սովրի քո մանկական քաղցր լեզուդ... Ինչ երջանկութիւն...

Ներսէս.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուխու ազգային հոգևոր դպրոցին ՀԱՐԿԱՒՈՐ է ունենալ մի ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց լեզուի և թուաբանութեան 600 ռ. ռոճիկով. այլ և հարկաւոր են ուսուցիչներ Ղարաբաղու և Նուխու գիւղական դպրոցների համար: Ցանկացողներից խնդրում եմ շուտով դիմել ինձ Շուշի:

Թեմ. վերատեսուչ Յ. Տէր-Գրիգորեանց.

ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Տեղափոխուեցաւ աւելի յարմարաւոր տեղ, այն է Տրօիցի փողոցի վերայ № 11, Նամակատան (փոստին) կից եսի փողոցում: Ընդունվում է ամեն տեսակ պատուէրներ:

Վիմագրութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է առ այժմ Ալէքսանդրապօլում Կարապետ Յովհանջանեանցի աշխատասիրած 2-դ նկարը, որ պարունակում է **ԽՆԾԿՕՆԻՑ** մենաստանների հետ, **ՇԻՐԱԿԻ ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԵԱՆՑ** տեսարանները, որոնք հրատարակուած չեն եղել տակաւին ոչ լուսանկար և ոչ էլ վիմատիպ պատկերներով: Գինն է 1 ռուբլի: Կարելի է ստանալ հետևեալ հասցէով՝

Въ гор. Александрополь, Карапету Хачатурянцу Аганджаніанцъ:

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակաց գիտութեան, որ այսօրվանից (օգ. 12-ից) մինչև օգոստոսի 20-ը նշանակվում է քաղաքային «Արհեստաւորաց Ուսումնարան» մտնելու յայտարարութիւնների ընդունելութիւնը: Յայտարարութիւնները ընդունում է ուսումնարանի կառավարիչը իր տանը, Էկզարխի հրապարակի վերայ, № 8: Ընդունվում են 13½ տարեկանից ոչ պակաս երեխաներ: Քննութիւնները կ'սկսվին օգոստոսի 22-ից: Գրաւոր խնդրագրերի կարևորութիւն չը կայ, որովհետև կառավարիչի մօտ կան խնդրագրերի տպած օրինակներ: 2—4

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակաց գիտութեան, որ սեպտեմբերի 1-ից քաղաքի մէջ բացվում են **ԵՕԹ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ** տղաների, որոնց մէջ առարկաները կ'աւանդվին մայրենի լեզուներով—ռուսերէն, հայերէն և վրացերէն: Իրանց որդիքը այս ուսումնարաններ տալ ցանկացողները հրաւիրվում են ներկայացնելու վկայականները (մկրտութեան և ծաղկահատութեան) քաղաքային վարչութեանը ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև կէսօր: Գրաւոր խնդրագրերի կարևորութիւն չը կայ, որովհետև նրանց տպած օրինակները գտնվում են վարչութեան մէջ: 2—4

Դուրս եկան մամուլի տակից

հրատարակութեամբ Ջաք. Գրիգորեանցի «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ» և վաճառվում են.

1) Ծերենցի «Թէոդորոս Ռշտունին», գինն է	1 ռ.	— կ.
2) — — «Թորոս Լևոնին», երկր. տպագրութիւն	1 ,,	— ,,
3) — — «Երկունք Թ. դարու»	1 ,,	— ,,
4) Գամառ-Քաթիպա «Մանկակ. տոտնաւ. և երգեր»	— ,,	20 ,,
5) «Դիւցազունք՝ Հայկ, Արամ և Վահագն»	— ,,	30 ,,

Վաճառվում են և հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) «Սոխակ Հայաստանի», հատոր առ. գինն է.,	1 ռ.	— կ.
2) Րաֆֆի «Դաւիթ-բէկ» առաջին հատոր	1 ,,	50 ,,
3) — — «Խէնթը»	1 ,,	20 ,,
4) Այվազեանց Գ. արքեպ. «Գաղտնութիւն խալդեան ուսումնարանի»	2 ,,	— ,,
5) «Տնային բժշկական մարմնամարզութիւն»	— ,,	40 ,,
6) Քիշմիշեան, «Բուսաբանութիւն համառօտ»	— ,,	30 ,,
7) Կոստանեանց, «Գրաբառ բայերի խոնարհումը»	— ,,	25 ,,
8) Աթանասեանց, «Երևանի նահանգի բուսաբանութ.»	— ,,	50 ,,
9) Ն. Ք. Դ. «Խօսակցութիւն օրիորդաց մէջ»	— ,,	10 ,,
10) Մօղեստովի «Մարդուս բարոյական զարգացումը»	— ,,	30 ,,

19—20

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ Հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել դպրանոցի ՈՐԴԵԳՐՆԵՐԻ ՍՆՈՒՆԴԸ, ԼԱՊՏԵՐՆԵՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ և այլ մանր ծախքերը: Այս մասին նշանակած է **ԱՃՈՒՐԴ** (առանց կրկնաճրդի) հոգաբարձական խորհրդարանում օգոստոսամսոյս 19-ին, երեկոյեան 8 ժամին: Մանրամասն պայմանների մասին կարելի է տեղեկանալ դպրանոցի դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, ցերեկուայ 10—12 ժամին:

Հոգաբարձու Գէորգ Աքիմեանց:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ մէջ վերաքննութիւնները կ'սկսուին օգոստոսի 20-ին:

Յայտնելով այս մասին վերաքննութիւն ունեցող **ԱՇԱԿԵՐՏԱՑ**, խնդրեմ ժամանակին ներկայանալ քննութեանց:

Տեսուչ Ա. Նահապետեանց:

Գրիգոր Տէր-Միքայէլեանի «**ԱՇԽԱՏԱՆՔ**» լրագրի խմբագիր, ունի ցանկութիւն առաջիկայ սեպտեմբերից գնալ հայ գաւառ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ կամ ՏԵՍՉԱԿԱՆ պաշտօնով: Ցանկացող ուսումնարանական վարչութիւնք թող բարեհաճին վաղօրօք յայտնել իրանց ցանկութիւնը այս հասցէով.

Въ Тифлисъ, въ редакцію газеты „Трудъ,“ каравань-сарай Тамамшева, 5-ый этажъ, № 15:

Յառաջիկայ ուսումնական տարուայ համար **ԵՐԵՒԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ** հարկաւոր են **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ** հայոց, գաղղիերէն լեզուների, գծագրութեան, տոմարակալութեան, Ռուսաց վայելչագրութեան, Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար. և մի ուսուցիչ տղայոց ծխական դպրոցի: Ամեն մի ուսուցիչ պարտաւոր է ունենալ շաբաթական 24 դաս: Ցանկացողները թող բարեհաճին իւրեանց պայմանները և ուսման վկայականները առաջարկել նոյն դպրանոցի վարչութեանը:

Անդամ հոգաբարձութեան՝
Վարդան Եղիազարեանց

«ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ»:

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թիֆլիզի բոլոր գրավաճառների մօտ «Ռօբինզօնի պատմութիւնը», թարգմանութիւն Գիւտ քահանայի Աղանեանց. գինն է 60 կոպէկ:

—

Այժմ Մոսկվայում դուրս եկաւ մամուլի տակից նոյն ընկերութեան հրատարակութեամբ և ստացուեցաւ ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ հեղինակի պատկերով:

Գինը լինելու է 50 կոպէկ:

Նոյն փառակազմ 1 ռ. 20 կոպ.:

ՍԻՄՖԵՐՈՊՕԼԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի **ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ**, որ ծանօթ լինելով մանկավարժական նոր ձևերի հետ, կարենայ ուսուցանել հայոց լեզու երկու նախակրթարաններում, հայոց պատմութիւն առաջին և երկրորդ դասատուներում և կրօնք բոլոր չորս դասատանց մէջ: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրի մօտ:

ԾԱԽՎՈՒՄ Է

Արդիւնաբեր **ՏՈՒՆ**՝ կողմնակի շինութիւններով, որոնց գետնի տարածութիւնն է 225 քառ. սաժէն փոքրիկ պարտէզով բակում, գրաւ է դրած պրիկազում:

Գինն է 4000 ռուբլի:

Նովո-տրոյիցկոյէ Պօսելենիէ № 12/13
Հարցնել Շահվերդովի կոնտորում:

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆՈՒՄ

Ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրայ ամենամատչելի գներով:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից: «Մանկական պարտէզի» մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ «Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:

Իշխան Ն. Ամատունու տուն, Վելյամինովսկի փողոցի վերայ:

Բ. Միրիմանեանց.

Դուրս եկաւ մամուլի տակից «**ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ**» ազգային լիակատար երգարանի Առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, փոփոխած, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր երգեր, հաւընտիր բանաստեղծութիւններ և արձակ գրուածներ: Վաճառվում է. Թիֆլիս «Կենդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում, Երևան՝ պ. Աբգար Գուլամիրեանցի խանութում, Բագու՝ պ. պ. Գրիգոր Դիլդարեանցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում: Օտարաքաղաքացիները կարող են դառնալ Բագու նոյնպէս «ՍՈԽԱԿԻ» խմբագիր-հրատարակչին այս հասցէով. Аваку Лазаревичу Григоріанцу, въ Баку. Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի:

Աւագ Գրիգորեանց.

ԱԶԴ

«Միացեալ ընկերութեանց» տեսչութեան յանձնուած **ԿՈՐԱՅ Ս. ԴԱՆԻԷԼ ՎԱՆՔԻ** զարգացմանն համար մի ցուլով 10 երիվար կովեր և մի արուով 6 ռուսական ձիեր հարկաւոր լինելով, ընկերութեան նիւթական վիճակի անձկութեանը պատճառաւ՝ Կեդրոնական ժողովն իւր վերջին նստին մէջ Տնօրէն ժողովոյ յանձնարարեց ազգային առատաձեռնութեանը դիմել յիշեալ անասունները ամբողջապէս կամ մասամբ հայթայթելու և «Միացեալ ընկերութեանց նուիրելու համար:

Հայաստանի տնտեսական վիճակի բարւոքմանը նպաստող այս ձեռնարկը երկրին հողագործական անասնոց տեսակն ազնուացնելու օգուտն ևս ունենալով, Տնօրէն ժողովը կը յուսայ թէ ընկերութեան հրաւէրն անլսելի չը պիտի մնայ:

Ի դիմաց «Միացեալ ընկերութեանց» Տնօրէն ժողովոյ՝

Ատենադպիր ԱՐՇԱԿՈՒՆԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ
Ատենապետ Մ. ՁԵՐԱԶ

3—5

ԵՂԲԱՐՑ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՈՎՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

Գրասենեակը Կուզնեցկի կամրջի վերայ, Կ. Ս. Պօպովի տանը:

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆիրմայի **ԹԷՅԻ** առևտուրի համար բաց արինք նորերում նոր խանութներ և հետևեալ քաղաքներում:

ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պէտրովսկի փողոցի վերայ, սեպհական տուն:
ԹԻՖԼԻԶՈՒՄ—Գօլօվինսկի պրոսպէկտի վերայ, Միրիմանեանի տուն:
ՍԻՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ—Բօլշօյ-Մօրսկօյ փողոցի վերայ, կօդէն վաճառականի տունը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները—**Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ** և **ԿԻԵՎՈՒՄ**—թէյն, որ կշռած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից, որ գտնվում է Մոսկվայում, Կրասնոսելսկի փողոցի վերայ, սեպհական տան: 7—30

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՆՈՒՆՈՎ

Մեր **ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ** դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է կովկասեան ու կենդրոնական գրավաճառանոցներում:

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով և ճանապարհածախսը իւր վերայ առնելով՝ թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарянцъ.“

Շուտով լոյս կը տեսնի նաև **ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ** դասագիրքը:

Յ. Նազարեանց.
14—25

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

13 օգոստոսի.

Ստեփան Կիլիչովին, Իսահակ Տէր-Միքելովին, Զուբեևին, Ֆլօրէնսկայլին, Գրիգոր Շահբուդաղովին, Աւագին, Գասպարին, Զօլօտարևին:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 14-го Августа 1881 г.
Типографія М. Ротиняцъ и К.
Տան բժշկապետ Մ. Ռոտինեանց.